1923

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ
ԹԻՒՆ „ՄՈՒՐՃ
ԵՒ ՄԱՆԳԱՂ“

891.99
Հ-26

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԳՐԱ
ԿԱՆ ԳԵՂԱՐՒԵՍՏԱ
ԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹԻԹԵՌՆԻԿ

891.99
Հ-26

Գուրգէն Հայկունի

# Գիշերային թիթեռնիկ

1 9 NOV 2011
1007
33968
2037
1884
2036

ՄՈՍԿՎԱ

0 6 JUN 2013
37895
2037

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹԻԹԵՌՆԻԿ

Ա.

Ձիւնը հանդա՛րտ, քուլա-քուլա
Մաղում էր մութ լռիկւան,
Մեծ քաղաքի փողոցներով
Անցնում էր հոծ կարաւան:

Այն օր տխո՛ւր, հոգիս հիւանդ,
Վշտերս հին, անմեկին...
Ես դուրս ելայ, որ շարքերում
Ձուլեմ հանուր հոսանքին:

Կաֆէների առատահոս
Ճաճանչներով կուրանամ,
Գարեջուրի եւ շիշերով
Ագահօրէն արբենամ:

Բ.

Այնտեղ, Քուրի՛կ գեղատեսիլ,
Դէմ ու դէմ
Ես քեզ տեսա, դու նայեցիր
Սիրաղէմ.
Դու ժպտացիր թեթեւամիտ
Նազանքով—
Ինձ գերելու քո խօլական
Վայելքով:

—Ջահիլ տղա, կաքէների
Սիրահար,
Հարաւի մեղկ, սիրուն բալիկ
Ցրտահար,
Արի՛ ինձ մօտ, կը ջերմանաս...
Մինչ ի լուս...
Համբոյրներով կը փաղաքշեմ
Սի. նլուս:



...Գունատեսիլ ճաճանչներով
Կուրացած,
Մեծ փողոցից արշաւեցինք
Դէպի ցած.
Գրկեցիր ինձ քո ձեռքերով
Կանացի...
Հեշտանքի սէր այնպէս ուժգի՛ն
Զգացի...

---

Գ.

Մեղմ լոյսով կարմրագոյն լապտերի
Փարատեց սենեակիդ մթութիւն.
Հիւսիսի շիկահե՛ր դու փերի,
Վայրկենի փաղանցուկ խնդութիւն,
Մերկացար, հերարձակ, ժպտով
Բացեցար նրբակազմ վարդենի
Եւ արձակ կուրծերով, անվրդով
Կանչեցիր գիշերուա խրախճանի...

...Յանկարծ մեղմիւ, ստա՛ր Քուրիկ,
Բաղխումների դատալիք.
Մի վիշտ ցոլաց քո նուրբ դէմքին,
Դու զսպեցիր... խնդագին...
Ես այն տեսա քո աչերում,
Գիշերային թիթեռնիկ,
Ո՞վ կենազուրկ մեղկ արարած,
Հալածական շրջող կին։



Դ.

Այն վիշտ օրից, որպէս աւանդ
Ապրում է ջինջ, իմ հոգում,
Ժպիտներով ծաղկէտրած
Թախիծը նուրբ սրաթեւ,
Որ մենութեան քո ժամերին
Ցուսակտուր հեկեկում,
Դիւթում է մեզ վայելքներով—
Անսանձական ու թեթեւ։

---

Ծ.

Ձիւնը հանդարտ, քուլա-քուլա
Իջնում էր ցած վերստին...

Մենք դուրս ելանք...
Որ շարքերում
Ձուլենք հանուր հոսանքին:

1915 *Մոսկվա*



ՀՀ Ազգային գրադարան
NL0336848

37 895